ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ——— 2026 թվականի №-Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի ապրիլի 10-ի №104-Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Արարատյան Օկջ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0775 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0775 լիցենզիա) պայմանների 9-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2025 թվականի ապրիլի 11-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), ինչը, սակայն, չի ներկայացվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը,

բ) Ընկերությունը, մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի, Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2026 թվականի ապրիլի 14-ից հարուցել է վարչական

վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 14-ի №ՄՄ/34.3-Մ2-12/2002-2026 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում՝ նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողով ներկայացված 2026 թվականի ապրիլի 29-ի №ՄՇ/13471 գրությամբ, ըստ էության, ընդունելով թույլ տված խախտումը հայտնել է հետևյալը.

Հանձնաժողովի կողմից ԼԷ №0775 լիցենզիայի ստացումից հետո՝ 2025 թվականի մարտի 23-ին, Երևան համայնքը Ընկերությանը տրամադրել է թիվ ՆԹ-1512-25 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), ըստ որի՝ ռիսկայնության աստիճանը որակվել է որպես IV կատեգորիա, իսկ 2025 թվականի հոկտեմբերի 1-ին տրամադրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ԲՓ 230-25 պետական փորձաքննական դրական եզրակացությունը, որից հետո՝ 2025 թվականի հոկտեմբերի 10-ին, Ընկերությունը դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե՝ պետական համալիր փորձաքննության համար: Կոմիտեի կողմից Ընկերությանը ներկայացված պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի քվեարկության թերթիկի համաձայն՝ հողամասի գործառնական նշանակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել

նախագծով նախատեսված կառուցապատմանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նպատակային նշանակությունը նշված է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, իսկ գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների): Ընկերությունը՝ 2026 թվականի հունվարի 7-ին, դիմել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե՝ խնդրելով քայլեր ձեռնարկել գործառնական նշանակության մեջ էներգետիկ նշանակությունն ավելացնելու գործընթաց նախաձեռնելու ուղղությամբ, որից հետո՝ ջրային կոմիտեն տեղեկացվել է վկայականում նշված հողամասի ողջ մակերեսի գործառնական նշանակությունը փոփոխելու անհրաժեշտության մասին, ինչի արդյունքում՝ 2026 թվականի ապրիլի 14-ին Ընկերության աշխատակիցները քննարկում են ունեցել urban-permits.e-gov.am էլեկտրոնային հարթակն սպասարկող ընկերության ներկայացուցիչների հետ՝ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու համար պահանջվող գործողությունները հստակեցնելու նպատակով:

Ընկերությունը նաև վկայակոչել է Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետը և 11-րդ կետի 3-րդ ենթակետը և արձանագրել, որ առկա իրավիճակը չի գտնվում իր վերահսկողության ներքո, խախտումը հետևանք է ֆորս մաժորի և վերջինս ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ գործողությունները անհրաժեշտ թույլտվությունների ստացման ուղղությամբ, և ժամկետների հետ կապված խնդիրները պայմանավորված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ իրավասու կազմակերպության կողմից կիրառվող ընթացակարգերի տևողությամբ: Միևնույն ժամանակ, խնդրել է Նախագծի ներկայացման ժամկետը երկարաձգել և հարուցված վարչական վարույթը կարճել:

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը, ԼԷ №0775 լիցենզիայի պայմանների 9-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, և Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նշված ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2027 թվականի ապրիլի 11-ը, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու՝ Կարգով սահմանված հիմքերը բացակայում են:

Ինչ վերաբերում է Ընկերության այն փաստարկին, որ Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելը Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան հանդիսանում է ֆորս մաժոր, ապա հարկ է փաստել, որ Ընկերության կողմից ներկայացված փաստարկներով չի հիմնավորվում այն հանգամանքը, որ վերջինս ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Ընկերությունը չի ներկայացրել թվարկված հանգամանքների առկայությունը փաստող որևէ ապացույց, որևէ կերպ չի հիմնավորել դրանց ուղղակի առնչությունը լիցենզիայով ամրագրված՝ Նախագծի ներկայացման պարտավորության կատարման անհնարինության հետ, ինչպես նաև չի հիմնավորել, որ ինքը՝ գործելով օրենսդրության համաձայն, Նախագիծը սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել պետական մարմնի կամ այլ կազմակերպության գործողության կամ անգործության հետևանքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, իսկ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10.1-ին կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից:

Ավելին, Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ԼԷ №0775 լիցենզիայով ամրագրված ժամկետը մեկ անգամ համարվել է երկարաձգված և նշված պարտավորության կատարման համար Ընկերությունը ունեցել է, ընդհանուր առմամբ, շուրջ 2 տարի ժամանակահատված, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0775 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2024 թվականի մարտի 15-ի թիվ 041-342 գրությամբ ներկայացված թիվ 24411155105 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 537 500 (հինգ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարից 268 750 (երկու հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 537 500 (հինգ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2027 թվականի մայիսի 26-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0775 լիցենզիայի պայմանների 9-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2027 թվականի ապրիլի 11-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
— ——— 2026թ.